

ՏՆՕՐԻՆ-ԽՄՐԱԿՐԱՊՈՅ


7. ՄԱՍՈՒՐԵԱՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ցարկան	500	դր.
Վեցամսայ	250	»
Եռամսայ	150	»
Արտատնական տրվ.	70	ճր.

Բաժանորդագրություններ կ'սկսվեն
ամիս ամսոյ ձիգ եւ 15

100 ՓՐԱ



Fondateur
M. MAMOURIAN
Directeur-Rédacteur en chef
H. MAMOURIAN
„Arévélian Mamoul,
JOURNAL ARMÉNIEN
QUOTIDIEN

100 ՓՐԱ

Օրաթերթ ազգային եւ փառաբանական

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Սան Բեմօի Հաշտութեան Համաժողովը փակեց իր խորհրդակցական նիստերը:

Համաժողովին աշխատութեանց եւ սրտամանց մասին շատ տեղեկութիւններ հաղորդուեցան, սակայն դժբաղդաբար ստոյգ, վաւերական որ եւ է տեղեկութիւն մը անկարելի եղաւ ունենալ:

Եւ շատ բնական էր որ այդպէս պիտի ըլլար, քանի որ Համաժողովը իր նիստերն սկսելէ առաջ պաշտօնապէս ծանոյց թէ տեղեկութիւններ, Համաժողովի որոշմանց կամ խորհրդակցութեանց մասին չպիտի հաղորդէ:

Չամազան երկիրներու հաշտութեան կնքումի կամ սահմանադրութեան որոշման մասին, մասնաւոր վաւերական տեղեկութիւններ չկան թէեւ, բայց ընդհանուր տեղեկութիւններ գոյութիւն ունին, որոնք հաղորդուեցան Համաժողովոյ դիւանին՝ հետապահան թերթերու ներկայացուցիչներուն:

Հիմնուելով այդ տեղեկութեանց վրայ, այսօր գիտենք թէ՛ Համաժողովին աշխատութեանց կարեւորագոյն բաժինն յատկացուած է թրքական խնդրոյն կամ աւելի ուղիղ պիտի ըլլար ըսել՝ Արեւելեան հարցին:

Արեւելեան հարցը արդէն կնքուած, ալ աւելի կնքուածեցաւ վերջին դեպքերուն բերմամբ:

Այդ հարցին մէջ կ'պարփակուին կարգ մը ուրիշ հարցեր, կարգ մը ուրիշ հողամասերու կարգադրութիւններ, որոնք ամենքն միանալով կը կազմեն արեւելեան հանգոյցը:

Բայց այդ հանգոյցին ինչ ինչ շղթայումներն թերեւս այնքան անքակտելի չըլլան, որքան հայկականն, որու սահմանազուխներուն բնորոշումը կարծուածին չափ դիւրին չըլլար, ստեղծուած գոյաժիճակի մը բերմամբ, որու վրայ առաջիմ անդրադարձումով աւելորդ պիտի ըլլար:

Համաժողովն այսօր շատ աւելի դիւրութեամբ կ'յաջողի Սուրիոյ, Միջագետքի, Պարսկաստանի, Նոյնիակ Թուրքիոյ սահմանազուխներն գծել եւ դժուարութեան կ'բաղդի Հայաստանի սահմանազուխներուն առջեւ:

Այդ դժուարութիւնը ինչպէս ըսինք, արդիւնքն է քանի մը պատճառներու, որոցմէ մէկն ալ Ամերիկայի մեկուսացումին վերադրելի կրնանք համարել:

Սան Բեմօի Համաժողովէն հասնող լուրերն Հայաստանի սահմաններուն համար բոլորովին հակասական հանգամանք մը ունենին: Այդ լուրերուն մէջ գտնուեցան նոյնիակ այնպիսիներ՝ որ քուն իսկ հայկական ծագում ունեցող հողամասեր կատարածի տակ զրին, ուրիշներ՝ որ ակնհերեւ ցոյց կուտային թէ այդ լուրերու հեղինակներն աշխարհագրական ծառայութիւններ իսկ չունէին, ինչպէս օրինակի համար Տրապիզոնն Հայաստանի տարւով եւ կարինն՝ դուրս թողնելով: Ուրեմն կարելի է եզրակացնել թէ՛ Համաժողովն խիստ զազանի պահած է Հայաստանի սահմանազուխներու պարագան եւ քաղաքական հաշիւներու բերմամբ չպիտի հաղորդէ իր որոշումներն, մինչեւ որ թուրք գաշնագիրն չներկայէ անորմէ զրկուած պատուիրակներուն: Եթէ այս ենթադրութիւնն հաւանականութիւն չգտնէ, ուրեմն կ'ընչանակէ թէ հայկական սահմանազուխներու վերջնական գծումն կ'ստուգուի պիտի ունենայ, Ամերիկայէ եւ նաև անկլո-ֆրանսական կիլիկիոյ մասին կնքելիք համաձայնութիւնէն Միջ Տրապիզոնի գրուման լուրը ինպատակ Հայաստանի մեծ նշանակութիւն մը ունի:

Եւ եթէ ընդունինք, որ հայկական խնդիրը զեռ առկախ ձգելու զօրաւոր պատճառներ կան պատճառ մը չունինք համոզում գոյացնելու որ Թուրքիոյ, Սուրիոյ, Պարսկաստանի եւ Միջագետքի բոլոր հարցերը վճռուած ու որոշ կ'ընեն մը վրայ գրուած չըլլան:

Կասկածելի կ'ընայ հայկականի նմանֆիւրստիտանի մը վերջնական սահմանադրումը, որ աւելորդ է ըսել, սերտ առնչութիւն ունի հայկականին հետ: Իսկ այս ամենուն մէջ ի՞նչ կայ իրապէս լուծուած հարց մը, այն ալ հեւելեականն է, որու մասին լրակատար տեղեկութիւններ տուն հետազոտներն եւ Հեւլազաի մեծ հայրենասէրին եւ փրկչին յայտնած գոհունակութիւնն, արդէն բաւականէն աւելի զօրաւոր գրաւականներ են որ Յունաստան կ'համարի իր գարաւոր բազմանքներուն եւ կ'յաջողի կազմել Միծ-Յունաստան մը:

Բնականաբար մանրակրկիտ ու վաւերական չենք կրնար համարել ցարդ հասած տեղեկութիւնները, որովհետեւ պաշտօնական հանգամանք մը չունին, սակայն կրնան կէս-պաշտօնական նկատուիլ եւ երբ քանի մը օրէն վէճերէլու հասի Յունաստան եւ հաղորդէ ժողովուրդին կամ խորհրդարանին Համաժողովին որոշումներն, այն ժամանակ լաւ եւս պիտի կրնանք ըմբռնել թէ որքան օգտակար կրցած է ըլլալ յոյն նախարարութեան իր հայրենիքին:

Սան Բեմօի Համաժողովն ամէն կէտերու մասին համաձայնած է գիւրման գաշնագրին անթերի գործադրութեան վրայ:

Այս գաշնագրին գործադրութեան ձեւին մէջ թէև պահ մը տարակարծութիւն տեղի ունեցաւ ընդմէջ Անգլիոյ եւ Ֆրանսայի, սակայն ինչպէս կ'ենթադրուի Սան Բեմօի մէջ այդ բոլոր տարակարծութիւններն հարթուեցան եւ որոշուեցաւ գերման գաշնագիրն որևէ վերաքննութեան մը չենթարկել եւ անոր անթերի գործադրութեան համար հարկ եղած միջոցներն ի հարկին կ'իրարկել:

Իսկ Ֆրանսիոյ հարցը իր վերջնական լուծումը չգտաւ: Համաժողովը թուրք որ Իտալիա համաձայնութեան գետին մը գտնէ Եռեկո-Սլաւ կառավարու-

թեան հետ, ինչպէս որ Անգլիա եւ Ֆրանսա կիլիկիոյ խնդրն իրենց միջև կարգադրելու որոշումը մը յանգած ըլլալ կ'երեւին:

Թերեւս կիլիկիոյ խնդրոյն առկախ մնալն ալ գրգիռ մը եղած ըլլայ անոր ներկայ տնտեսոյ ու քառային վիճակին, եւ երբ այդ անասուցութիւնը վերնայ, հաւանականաբար ընդգրկուի ազգու եւ կորովի քաղաքականութիւն մը:

Հ. Մ.

ՀԱՅԵԼԻՔԻ ՆՅՈՒՆ

„ՈՍԿԻ ՀՈՐԹԸ“

Լեօնի՞ք Իզմիրցիներ: Մէնէմէնի մէջ ելեքտրական լոյս պիտի գետնուի եղբր: Երեւակայնցէք որ Մէնէմէն ելեքտրականութեամբ կ'օժտուի:

Եւ Մէնէմէնի քովի՞վ մի Գոնիականի այդ նազելի հարսը՝ ոչ միայն ելեքտրականութեամբ չի լուսաւորուիր, այլ նոյն իսկ կ'ըլլանան անոր կէս մութ, կէս լոյս օդային կազի լաւտեղիներու բեկրեկող լոյսը...:

Հաւատացէք որ հրաշալի է:

Ապացու տարուան խաւարէն հապիւ փրկուած էր Իզմիրի ժողովուրդը, չնորհիւ հեւլէն իշխանութեանց միջամտութեան եւ ընձեռած զրամական փութարին, երբ անա յանկարծ կրկին խաւարի մէջ թողուեցաւ քաղաքը, շրջորհիւ օդային կազի ընկերութեան տարապայման օդանոցներն:

Հիւլէն իշխանութիւնները անշուշտ վազը միւս օր, երբ Իզմիրի մասին տրուած որոշումներն սկսին գործադրել բնականաբար պիտի խորհին նաև վերջնական կարգադրութիւն մը ընել եւ ի հարկին պարտադրել կազի ընկերութիւնն, որպէսզի քաղաքը մթութեան մէջ չմնայ:

Ծաւարի է որ Իզմիրի նման քաղաք մը ցարդ ոչ ելեքտրական լոյս ունի, ոչ հեռաձայն, ոչ ելեքտրական թրամ եւ ինչու՞ այս ամենն, որովհետեւ թուրք գարաւոր տիրապետութիւնն այնքան բարեգործող, յաւաջիւնական նորաթիւններու հետամուտ եղած է որ ժամանակ չէ ունեցած Իզմիրի նման քաղաքի մը բարեգործութեամբ զբաղել:

Թուրքերն ակնհար հարձակին Իզմիրի կորուստին համար, բայց ունի՞ն այդ իրաւունքը, ունին այդ աւազիւր թողտուութիւնը:

Իզմիր այնպիսի քաղաք մը զարմած ըլլալու էր որ նախանձը զրգոէր եւրոպական առաջնորդ քաղաքներու, մինչդեռ ամենէ յետագէմ ու ամենէ ողորմելի քաղաքը զարմած էր իրենց շնորհիւ, իրենց քաղաքակրթութեան համար ունեցած սիրոյն եւ ձգտումներուն բերումով...:

Երբ թրքական տիրապետութիւն ըսուի, հոմանիչ է անոր նաև քանդումի քաղաքականութիւնը:

Այսքան գարիլէ ի վեր, հազիւ յաջողեցան այս վիճակին վերածել զայն, բարեգործաբար կ'փրկուի քաղաքը եւ կ'մտնէ տարբեր տիրապետութեան մը տակ, վստահաբար եթէ զար մըն ալ մնար թուրքին, Իզմիր քաղաքի անունը պիտի մնար, առանց քաղաքին հետքի իսկ մնացած ըլլալու:

Իզմիր կ'փրկուի եւ անոր բնակչութիւնն պէտք է բարբառող համարի ինքզինքը...:

«Գոյամարտ»ի երէկուան խմբագրականին համաձայն, ոսկի հորթը մարմին մըն է, որուն առջև ծուկի կուգայ «պատկառելի մեծամասնութեան քուէն», անոր համար, որ ոսկի հորթը (=կեղք. Որբանոցի վարչութիւնը) «կը սպառնայ եղբր հրաժարել»:

Այսչափը բաւական էր, որ յիշեալ թերթը «անպատկառ շահաւոր» մը ձեռք որբանոցի վարչութեան եւ տնոր «Չոլ» անդամներու հասցէին, ամբողջաբար մասնագիտութեամբ մը հաւատացնել ճարտարաւորելով իր ընթերցողներուն թէ անոնք «ո՛ւէ տնոր» է ինչ ուզել են թարկել իրենց ստանձնած որբանամ մատակարարութիւնը», փոխանակ ուղղաժիտ կերպով մը ըսելու թէ չեն ուզել եւ ինչու՞ չեն սահմանադրուած եւ օրէնսօր տնոր» որբեր տնորներու:

Բայց չմտնանք, թէ ամեն մարմին կ'արժէ այն ինչ որ կ'արժէ անոր անգամները: Այս ճամբով է միայն որ կարելի կ'ըլլայ գնահատել ու արժեքնել մատակարարական, վարչական կամ խմբագրական մարմին մը ունեցած արժէքը:

Այս ճամբով գնահատում մը կարեւոր ընելու համար դիմեցինք Սուրէն Պարթեանի «Ձմիւռնահայ Տարեցոյց»-ին եւ անկէ կը քաղենք Ա. Կ. Ուլարչուլեան անդամներէն ունեց բարոյական գիւտագծերը, առանց մեր կողմէն բառ մը աւելցնելու եւ թողնելով ընթերցողը գտնէ, թէ այդպիսի տարբերակ կազմուած մարմին մը արամազի կրնա՞յ ըլլալ օրինաւոր տնորի խաւարի:

Ահա Ս. Պարթեանի բառերը.

Մ. Ա. Չ. Ս. ՈՐԹԸ. — «... Ստուաբութիւ պաշտօնէութիւն մը, որ Արմիրաբեան-Ազնաւորեան հաստատութեան մէջ վերջինս տաանեակ տարիներու ընթացքին իր գաղափարային գիտակցութիւնը բիւրեղացուցած է, յանձին Պ. Միհրան Ազնաւորեանի հանգրված է միշտ քաղաքի սրտացու, հաշտաբար ու շրջահայաց վարչապետութեան մը: Ազգային տիրոջութիւն մէջ Պ. Ազնաւորեան խուսափած չէ երբէք իր տարիքին հարկադրած պարտաւորութիւններէն: Գաղութիւն տեղական վարչութեանց մէջ սոսկ պատուակալ մասնակցութիւն մը չէ՛ բերած, այլ սրտագին հոգածութիւն եւ յարատեւ օժանդակութիւն: Պ. Միհրան Ազնաւորեանի ամենօրեայ զուրկութեան խնամքին օտարական եղած է մասնաւորապէս Ազգ. կեղք. Ուրբանոցը, որ գիտադարձի վարչապետին հիմնուած Ձմիւռնահայ ամենէն սրբատաղաւ հաստատութիւնն է» (Ձ. Տարեց. էջ 38):

ՍՈՒՐ ԹԱԳԻՈՐԵԱՆ. — «... որ այս (Սարգիս Թաղաբեանի) հայրական գուրգուրտ հոգածութիւնը կ'արգա-

ԵՍ

Վարդ ԳԵՐ. Տ. ՄՈՒՇԵՂ ԱՐՔԵՓՈՍԿՈՎՈՍԷ
ՄՏՔԻ ԹԱՓԱՌՈՒՄԵՐ, ԿԱՊՈՅՏ ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆԸ

Կ Ի Լ Ի Կ Ի Ա Յ Է Լ ՈՒ Ի ԵՐ

Ձեռքի Տալի շրջակայ նամրիւն ճամբու վրայ գրաւման ուժերուն կողմէ
Ձեթէնքու դէմ սկսած է հետապնդումը: Երկուշաբթի օր Ապրիլ 19ին առտուն
Ձեռքի Տալի վրայ մասնաւորապէս հետազոտութեան փորձ մը ի գործ դրուած է
նպատակ ունենալով չէթէնքու ոյժը, կազմակերպութիւնը և այլ հանգամանքը
ուսումնասիրել:

Յարձակում գործելու համար վերոյիշեալ տեղը զրկուած ոյժը յիշեալ վայ-
րը ոյժքին թնդանօղի, միզրալիյօզի և հրացանի կրակին տակ առած է Այս
կրակին պահուն չէթէնքու չկրնալով տոկալ, Ձեռքի Տալի ձգելով փախուստ
տուած են Այս ընդհարումի մէջ չէթէնքու կ'ունենան 10 հոգի սպանեալ և
15 հոգի վիրաւոր: Այս եղելութիւնը մասնաւորապէս կը տեղեկացուի Քիւրտ
Մուսայի մէջ բռնուած Ձեթէնք մը:

Ապրիլ 21 գիշերը Քիւրտ Մուսայի և Յունուս օղուի խրամներուն չէթէ-
նքը խորտակեցներով և թնդանօթներով կը պատրաստուին և յարմար գիր-
քերը կը բռնեն յարձակում գործելու համար, հետեւեալ առտու կանուխ չէթէ-
նքը նկատելով որ գրաւման ուժերը դէպի Քիւրտ Մուսա կը յառաջանան 200
ծիւղերով անոնց դէմ կ'ելլան: Ասոր վրայ գրաւման ուժը ռազմագիտական խաղ
մը ընելով դէպի ետ կը քաշուի կ'ստիպուին չէթէնքը յառաջանալ, գրաւման
ոյժերը կ'յաջողին ամեն կողմէն պաշարելով անել վիճակի մը մտանել, այնպէս
որ հեռագիտակով ականատեսները կը պատմեն իրենց թէ չէթէնքու և թէ
իրենց ձիւրուն վիճակը: Այս ընդհարումի մէջ 15 սպանուած և 25 վիրաւոր
կունենան չէթէնքը:

Ապրիլ 22ի գիշերը Գրաւման ոյժի թնդանօթաձիգ ձիւրու, հետեւօրքերը
անմիջապէս ձեռք կառնեն հետապնդումի մը Ձեթէնքու իբր կեդրոն ծառա-
յող Քիւրտ Մուսայի վրայ յարձակելով: Հոն գտնուող չէթէնքը, չկրնալով դի-
մադրել Գրաւման ոյժին խորտակեցներուն և թնդանօթներուն կրակին, դէպի
ետ կը քաշուին Քիւրտ Մուսա գիւղին պաշարումը այնպիսի ռազմագիտա-
կանօրէն կը կատարուի որ Ձեթէնքուն մէկ կարևոր մասը չի կրնալով փախ-
չիլ ողջ ողջ գիրի կ'ընան:

Բռնուած Ձեթէնքուն մէջ քննութիւն կատարուելով, մէկ մասը տեղւոյն
վրայ հրացանազարկ եղած է, մնացեալ 8.10 չարագործներն ալ հարցաքննուե-
լու համար կեդրոն զրկուած են:

Այս ընդհարումի միջոցին Քիւրտ Մուսա գիւղին մեծագոյն մասը հրոյ ճա-
րակ եղած է, հրդեհը պատահած է ի մասնաւորի թնդանօթներու ուսմբերէն,
և միւսնոյն փամանակ հոգի ուժգնութենէն Քիւրտ Մուսա գրաւուելէն յետոյ,
ուժը դէպի Չամթէփէ կը յառաջանայ: այս միջոցին Տատալի գիւղէն քանի մը
հրազէն պարպուած ըլլալով գրաւման ուժը նոյն քաղաքն ալ պաշարելու կըս-
տիպուի և հոն ալ քանի մը տուներ կայրէ:

Գրաւման ուժերը իրենց յառաջխաղացումը կը շարունակեն:

Վ Ե Ր Զ Ի Ն Ժ Ա Մ

ՆԱԽԱԳԱՀ ՈՒՒԼՍԸՆ

ԿՐԻՈՒՆԻ ՀԱՅՍՏԱՆԻ ՀՈՎԱՆԱՒՈՐՈՒԹՅՈՒՆ
Ուսանողներէ հասած հեռագիրներ կը տեղեկացնեն թէ նախագահ Ուիլ-
սըն պատրաստ է ընդունիլ Հայաստանի հովանաւորութիւնը, բայց Մերակոյտը
կը հակառակի:

ԱՆԳԼԻԱՅԻՔ ՍԵՒ ԾՈՎՈՒ ՄԷՁ

Պօլսոյ անգլ. նաւատորմիցը պտոյտի ելած է Սև ծովու մէջ և մտեցած
է Կիրատոնի և Տրապիզոնի առջև:
Այս քաղաքներուն մէջ ցամաք զօրք հանած է, և զօրանցք կատարած շու-
կաներու և կարևոր թաղերու մէջ:

ՎԷՆԻԶԵԼՈՍԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՔ

Պ. Վէնիզէլոս մեկնելէ առաջ, Սան Բէմօ գտնուող «Մորնինկ Բոստի»
թղթակցին յայտարարած է թէ ինք շատ գոհ է Համաժողովին կողմէ տրուած
հեղինական պահանջներուն վերաբերեալ որոշումներէն: Յունաստան, ըսած
է ա՛ր, Արևելքի մէջ հաշտութեան մեծագոյն պաշտպաններէն մին պիտի ըլլայ:
Եպիբոսի խնդիրը լաւ ճամբու մը մէջ կը գտնուի: Պոնտոսի յոյները, ըսած
է վարչապետը արժանի են գովեստի իրենց հայրենասիրութեան համար:

ՎԷՆԻԶԵԼՈՍ Ի ԲԱՐԻՁ

Պ. Վէնիզէլոս, «Մորնինկ Բոստի» թղթակցին ըսած է թէ, Աթէնք մի քա-
նի օր միայն պիտի մնայ և պիտի վերագառնայ դարձեալ Բարիզ, ներկայ գլու-
նուելու համար թուրք զաշնագրին ստորագրութեան:

ՎԷՆԻԶԵԼՈՍԻ ՄԵԿՆՈՒՄԸ

Սան Բէմօէ կը տեղեկացնեն թէ Պ. Վէնիզէլոս երեքշաբթի օր հասած է
Ապելլոս, ուրկէ յաջորդ առտու ժամը Յին մեկնած է դէպի Աթէնք, ուր կըս-
պատուի շաբաթ իրիկուն կամ կիրակի առաւօտ: Մեծ ընդունելութիւն մը կը
պատրաստուի հեղին վարչապետին:

ԸՆՏՐՈՒԹԻՒՆՔ ԵՒ ՆԵՐՈՒՄ

Պ. Վէնիզէլոս «Մորնինկ Բոստի» թղթակցին յայտարարած է թէ, Աթէնք
վերադարձին պիտի առաւարկէ ընդհանուր ներում, իրաքննութեան ջնջում,
պատերազմական վիճակի դադարում և այն բոլոր սեղանները, որոնք աը-
ղիւնք էին պատերազմի վիճակի:
Ընտրութիւնները պիտի կատարուին թուրք զաշնագրին ստորագրութեան
անմիջապէս վերջ:

ՎԷՆԻԶԵԼՈՍ ՊԻՏԻ ԽՕՍԻ

Աթէնքէ հասած լուրերը կը հաղորդեն թէ Պ. Վէնիզէլոս Շաբաթ օր, Ա-
թէնք փամանակով ժողովուրդին պիտի խօսի, Անգլիական պանդոկի պատշա-
մէն:

ԻՏԱԼԻԱ ԵՒ ԵՈՒԿՕ-ՍԼԱՎԻԱ

«Թրիպունա» կը գրէ թէ, Իտալիոյ և Եուկո Սլավիոյ միջև բանակցութիւն-
ներ պիտի կատարուին մասնաւոր ներկայացուցիչներու կողմէ, որոնք Մայիսին
պիտի միանան Հոմմի մէջ:

ՎԷՆԻԶԵԼՈՍ ԵՒ ԻՏԱԼԻԱ

Իտալական մամուլը զրուստալից տոյր կը նուիրէ Պ. Վէնիզէլոսի, Սան
Բէմօի մէջ վերջին անգամ Պ. Նիթի ըրած այցելութեան առթիւ որ տեւած է
20 վայրկեան:

«Թրիպունա» կ'ըսէ. «Սան Բէմօ հաւաքուած գիւանդէտներու շարքին
Պ. Վէնիզէլոս ամենէն աչքսուուն է եղած իր յաջողութիւններով, և մասնաւոր-
ապէս համաձայն, մեծ պետութեան մը օժանդակութիւնը ձեռք ձգելով:

ՔԵՄԱԿԱՆՆԵՐՈՒ ՊԱՐՏՈՒԹԻՒՆ

Պաշտօնապէս կը հաստատեն այն լուրերը թէ ծանր պարտութիւններ կը քա-
ն տնոնք Գասթէմուրի կողմերը: Կառավարական գուեղերը գրաւած են Գաս-
թէմուրի ամրոցը շրջանակը, և այս պարտան կ'ստուգուի նաև անոյ, որ
արդէն իսկ հաստատուած են երէկուէն ի վեր Պօլսոյ-Գասթէմուրի-Սաֆ-
րանպօլուի միջև հեռագրական հաղորդակցութիւնները:

ԲԵՐԴԵՐՈՒ ՔԱՆԴՈՒՄԸ

Անգլ. զինուորներու հակակշիռին տակ պիտի քանդուին Տրապիզոնի բեր-
գերը և զինուորական պաշտպանութեանց ամրութիւնները:

ԱՄԵՐԻԿԱՅԻ ԴԻՐՔԸ

«Տէլլի Թէլէգրաֆ» կը գրէ թէ Ամերիկայի գիւանդատական շրջանակնե-
րու մէջ շնչուած ընդդիմութիւն մը կը տիրէ Թուրքիոյ զաշնագրին դէմ, կը
կտրուի թէ պատրաստուած զաշնագիրը, չպիտի գոհացնէ ոչ նախագահ Ուիլ-
սընը ոչ Մերակոյտը և ոչ հանրային կարծիքը:

Պօլսոյ և Թրակիոյ տրուած լուծումները հակառակ են նախագահ Ուիլսընի
հայեացքներուն Ամերիկացիք նուազ գոհ պիտի մնան նաև Իզմիրի և Հայաս-
տանի մասին տրուած որոշումներէն:

Ամերիկա չպիտի կրնայ օգուտ քաղել այն պայմաններէն որոնք իրեն կը
թոյլատրեն Նեղոսնիցայի հակողութեան մասնակցելու Թուրքիոյ զաշնագիրը Մ.
Նահանգներու՝ Ազգերու Ընկերակցութեան յարումը հետզհետէ աւելի խնդը-
րական կը դարձնէ:

ՅՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ ՀԵՌԱԳԻՐԸ

Պօլսէն կը հաղորդեն թէ Յոյն Պատրիարքարանը մասնաւոր հեռա-
գրով գիմուած ըրած է Համաժողովին, պնդելով և ցոյց տալով Օրթոտօքս Եկե-
ղեցիին դարաւոր իրաւունքները Պօլսոյ համալուստը բիւզանդական Մայր Ե-
կեղեցիին վրայ:

ԱՆՋԱՎՈՐԻ ՅԱՋՈՂՈՒԹԻՒՆԸ

Անգլոյր փաշա Ատափոզար գրաւելով սպաննած է տեղւոյն քէմալա-
կաններու պետ՝ Գնդ. Մահմուտ պէյը:
Անգլոյրի տրամադրուած է արագընթաց Կաւ մը, երթեւեկելու համար
Պանտրմաի և Պօլսոյ միջև:

ԷՆԿԻՐԻՒՄԻ ՄԷՁ ԺՈՂՈՎ

Պօլսէն հասած լուրերու համաձայն, Մուսթաֆա Բէմալ Էնկիւրի մէջ հրա-
ւիրած է գումարել միլիոններու ազգային ժողովը:

Իտալական թերթերու ստացած տեղեկութեանց համեմատ, Մուսթաֆա
Բէմալ արդէն իսկ տեղեկ է թուրք զաշնագրին լոյսը պայմաններուն, և թէ
Ազգ. ժողով գումարելով նպատակ ունի պայմաններն հաղորդել և ճշգիւ իրենց
բունելք գիրքը:

ՄԻԹԵՆԿԵՐ ԱՆԱՏՈՒԻ ՄԷՁ

Այն բոլոր քաղաքներու մէջ, ուրկէ քէմալիստները խոյս տուած են, ժո-
ղովրդական մեծ միթիւններ տեղի կ'ունենան, որոնք կը պախարակին քէմա-
լականներու շարժումը և հարատեւութիւն յայտնելով Մուսթաֆան կը յայտա-
բարեն թէ՛ Սուլթանին ընդունած հոշտութիւնը իրենք ևս պիտի ընդունին:

Տեղական Լուրեր

Թէ Աթին Երկրի մէջ կը շա-
րունակուին ներկայացուիլ հայկական
ընկերութեան ֆիլիթերը: Այդ ֆիլիթերն
հետզհետէ գնահատուելով բնականա-
բար ընկերութիւնն պիտի շնորհի
գտնուի ևս աւելի ընդարձակութիւն
տալու իր գործին: Երկուշաբթի օրէն
Կիսի ներկայացուիլ «Անուսի Պատի-
ւօք հետաքրքրական ֆիլիթը նշանա-
ւոր տրուեստագէտներու և ուսնի-
մասնակցութեամբ և հաշտակարար ար-
ուեստագիտուհի Բատիլու Ալմիրանտէ
Մանցիլի Իզմիրի Իրկիւն հայու-
թիւնն պիտի գնահատէ անտարակոյս
սյդ ֆիլիթը ևս որոշ պիտի հետեւին
5 նորեր ևս:

ԳԱՐԱԹԱՇԻ բարձուքը ֆոթօպոլի
դաշտին մօտերը կը գտնուի ջրի ա-
ուազան մը: Հինգշաբթի օր յոյն ե-
րիտասարդ մը ինքզինք կը նետէ այդ
աւազանին մէջ և կը խեղդուի: Աւա-
զանը քաշուած գիրք մը ունենալուն
պատճառով իր Գեպիլի իրազեկներ կը
հաղորդեն մեզ թէ, տեսած են երի-
տասարդ մը, որ նամակի մը ընթեր-
ցումէն վերջ, հեկեկալով վազած է
դէպի անորոշ ուղղութեամբ:

ԳՕՆԱՔ ԳԷՄԵՐ ԱԼԹԸ Թ. 47
Մանրավաճառ և ծխավաճառ
Պ. Վահան Ալիօղլուի մօտ փնտաւեցէք
«ԱՐԵՎԵԼԵԱՆ ՄԱՄՈՒԼ»

Մեծ Յունաստանի Պարզեւաւոր Փոխառութեան արձանագրութեան վերջին կրկնապատկած կ'ըլլաք. որովհետեւ 30 արուստ ժանտակամիչոցի մը մէջ

300 տրախմինոց պարտախուզութիւն կը բերէ

Դրամագլուխը	200	տրախմի
Տոկոս	300	»
Նուէր	100	»

Ընդհանուր գումար 600 տրախմի

Բայց ձեր պարտաւորոյն կը մասնակցիք նաեւ փոխառութեան պարզելին որուն առաջին պարզելն է

ՄԷԿ ՄԻԼԻՈՆ . ՏՐԱԽՄԻ

ATLANTIC ASSURANCE



COMPANY,
79,
CORNHILL

LIMITED.
LONDON.
E. C. 3.

Գ. Ո. ՈՍԿԱՆ

ՀԸՆԴԱՆՈՒՐ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ

ԻԶՄԻՐ, ԲԱՍՄԱԺ ԲԷՇՏԻՄԱԼԺԻՄԼԻՈՒ ՎԵՐԻ ՅԱՐԿ ԹԻՉ

ԱԶԳ

ՕՐԱԹԵՐԹ

990-998 Ուոլֆորթ - Բ. ՊՈՍԹՈՆ ՄԷ.

ՀԱՅ ՉԱՅՆ

Տէր և Տնօրէն. — Մ. Կէպէնկեան

Բաժնեկիւն տարեկան 800

Հասցէ փոստարկ 62 Ատանտ

ԲԺՇԿՈՒՂԻ

ՕՐ ԱՆՆԱ ՏԵՓԱՆԵԱՆ

Կը տեղեկացնէ իր բազմաթիւ յաճախորդներուն և յաճախորդուհիներուն որ դարձանատուն մը բացած է Գոգարեալը Ապաճիօղլու փողոց թիւ 28:

Մտերմամտութեանց համար զի մեկ իզարի զեղարանն Փրանկաց թաղ, ուր ամեն օր կ'այցելէ:

ՅԱՐԵՎԵԼԵԱՆ

31

ՅԻՇԱՍՆՆԵՐ

ԻՇԽԱՆ ՖԻԻՐՍՍԵՆՊԵՐԿ

Բայց այն ատեն, շտտ արդար է որ յաւիտենական նէմէսիսի հարուածը կրողներուն մէջ՝ մեծագոյն պատիժը ընդունի մաճառակամութիւնը:

Եւ պիտի ընդունի այդ պատիժը:

Հ Է Ր Ռ Ի Տ Լ

Պաշտանեան տաղանապի միջոցին Ռուսմանիա խիստ զփռակ կացութեան մը մէջ ինկաւ: Չէր կրցած օգտուիլ պատեհ վայրկեանէն՝ բանակցելու համար Պուլկարիոյ հետ՝ իր անդրաշնորհան սահմանադրութի փոփոխութեան մասին: Այդ պատեհ վայրկեանը ներկայացած էր պուլկար զօրաշարժէն առաջ, կամ՝ ամենէն ուշը՝ զօրաշարժի հրամանը դրուելուն և կռուի սկսելուն միջև անցած քանի մը օրերու միջոցին: Միայն Լիւլէ - Պուլկարի ճակատամարտէն ետքն էր որ նոր կառավարութիւնը բանակցութեանց սկսաւ Պուլկարիոյ հետ: Ամէն մարդ գիտէ թէ որչափ զփուար եղան այդ բանակցութիւնները:

Որովհետեւ Ռուսիա չէր ծածկեր իր գիտաւորութիւնը՝ օգնելու Պուլկարիոյ, եթէ մենք այս վերջնոյն վրայործակէինք, հաւանակամութիւնը՝ թէ Ռուսմանիա կրնար Աւստրիայէն օգնութիւն խնդրել, կարելիութեանց կալուածին մէջ կը մտնէր:

Այն ատեն է որ Աւստրիա համարձակեցաւ մեզի ներկայացնել կանխահաս ծանուցադիրը՝ իր հաւանական աջակցութեան համար:

Պուլկարէն զրկեց Ռիտլ տնունով մէկը զոր կը նախընտրեմ կոչել Հէր - Ռիտլ, որովհետեւ քիչ անգամ տեսած եմ աւելի յարացուցական տիպար մը այն զբոսնակ և անմարս գիտութեան՝ որուն մենաշնորհը ունին Գերմանացիները:

Անիկա չեմ գիտեր ինչ բարձր դիրք մը կը զբաւէր վիեննական պիւրօքրատիին մէջ, և Ֆրանսուա - Ֆէրտինանտի վստահելի մարդն էր՝ անոր ապագայ հիմնական նախարարը, կըսէին: Չափազանց վարդապետական միտք մը ունէր: Աւելորդ է ըսել թէ փողովուրդներու հոգեբանութիւնն բացարձակապէս օտար էր իրեն: Ասիկա Գերմաններուն համար ամենէն անմտաչելի կալուածն է:

Հէր Ռիտլ նախ մտաւ, ինչպէս իրաւունք էր, հիմնական նախարարութեան մէջ, և յետոյ առեւտրակա-

Արտածում, ներածում, գումարիտն, մաքսային գործողութիւններ, բեռնաւորում, պարպում, շոգենաւային ամեն տեսակ գործառնութիւններ: Դիմել Պոլիս Դալաթիա, քարափր, ծալէրօ բասաժ թիւ 2 ԱՐՄԱՆՆԱՆ ՅԱԿՈՒԲՅԱՆ շոգենաւային գործակալութեան:

ՓՈՂՈՎՈՒՐԴԻ ՉԱՅՆԸ

Օրաթերթի Կարգապետ և հասարակական Ստրագրապետ՝ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՅԱԿՈՒԲՅԱՆ Տարեկան բաժնեկիւն 700 դր.:

Արտածում, ներածում, գումարիտն, մաքսային գործողութիւններ, բեռնաւորում, պարպում, շոգենաւային ամեն տեսակ գործառնութիւններ: Դիմել Պոլիս Դալաթիա, քարափր, ծալէրօ բասաժ թիւ 2 ԱՐՄԱՆՆԱՆ ՅԱԿՈՒԲՅԱՆ շոգենաւային գործակալութեան:

Նին մէջ, Չեմ գիտեր թէ երկուսն աւստրալը հասկցա՞ւ թէ ոչ, բայց առեւտրական նախարարը յստակօրէն տեսաւ իսկական մարդը: Պ. Բաէնօ բոլ հեռաձայնով ըստ էին թէ Ռիտլ իրմէ կը խնդրէր որ Ռուսմանիա Աւստրիոյ հետ համաձայնութիւն մը կընքէ, ո՛չ աւելի, ո՛չ պակաս: Միենոյն ժամանակ ծանոյց ինձի թէ Հէր Ռիտլ այցելութեան պիտի գար ինձի:

Ընդունեցի զինքը: Ժամէ մը աւելի մնաց՝ որուն մեծ մասը մինախոսութեամբ անցաւ: Գէշ Ֆրանսերէն մը կը խօսէր, բայց ասիկա արգելք մը չէր իր միտքը բացատրելու: Տեսութիւններու և հաւատումներու մէջ կը կորսուէր, իրողութիւնները ուզածին պէս կը կարգադրէր, փոխանակ իրողութիւններու տեսութիւնը դուրս հանելու՝ այսպէս ինչպէս որ էին: Կ'ընդունէր թէ խորամանկութիւնը ներքին էր: Հէր Ռիտլ պատուական գիւնազգէտ մը կրնար ըլլալ ապուշներու համար: Իր գիտական խառնակոյտով կրնար ազդել անոնց վրայ և իր ստապատիր անկեղծութեամբ խաբել զանոնք:

Հէր Ռիտլ նախ սկսաւ հաստատել թէ Պաշտանեան ազգերը իրենց մէջ պիտի բաժնէին Եւրոպական թուրքիան: Աւստրիա՝ որ այս կերպով առեւտր. հրապարակ մը կը կորսնցնէր, իրաւունք ունէր տնտեսական փոխա-

րինութիւններու, և այս փոխարինութեանց մասին կը նախընտրէր նախ համաձայնիլ Ռուսմանիոյ հետ: Եթէ զփոստութիւններ յարուցանէինք, Պուլկարիայէն պիտի սկսէր Շանթաժ ակնեւը էր:

Հէր Ռիտլը մաքսային միութիւնն կուզէր մեղմէ, կ'զգուշանար բուն բառը արտասանելէ:

Երկար բարակ բացատրեց ինձի՝ թէ ստաւելագոյն չափով նպաստաւորաւ ազգի գրութիւնը այլևս անգործագրելի էր. թէ՛ այսուհետեւ աշխարհ պիտի քալէր նախապատուական սակագիներով: Աւստրիա կ'ուզէր սկիզբ լննել այս գրութեան որ կը կայանար ասոր մէջ, Աւստրիա մեզի պիտի տար՝ մեր անդական արտագրութեանց սահմանափակ քանակութեան մը փոխարէն՝ իր սպառման կարևոր եղող քանակութիւնը, նըպաստաւոր սակագին մը, և մենք ալ նոյնը պիտի ընէինք կարգ մը աւստրիական ճարտարուեստի արտագրութեանց համար:

(Շարունակել)